

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ «ՕՐԵՐԻ ՊՍԱԿԸ» ԺՈՂՈՎԱԾՈՒՈՒՄ

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գրողի ինքնատիպ աշխարհըմբռնումն ու լեզվամտածողությունը, նրա լեզվաոճական նախասիրություններն արտահայտվում են առաջին հերթին հեղինակային նորակազմությունների գործածությամբ, երբ ստեղծագործական գործընթացում գրողը որոշակի նպատակներով դիմում է բառաստեղծմանը:

Տ. Չրաքյանն իր նամակներից մեկում, արտահայտելով իր վերաբերմունքը բառաստեղծությանը և շեշտելով դրա կարևորությունը խոսքի արվեստում, գրում է. «Բառակերտությունն ինքնին ուշագրաւ բան մ'է արդէն, ոչ միայն անով, որ արուեստագէտի գործ է, այլ մանաւանդ անով, որ արդիւնք է վերացման եւ ընդհանրացման: Մասնաւորապէս բարդութիւնը կենթադրեն մտքին վերլուծման ու համադրութեան կարողութիւնները՝ առանց որոց անկարելի է բառ բարդել»¹: Ըստ Չրաքյանի՝ անհեռատես էին լեզվաբանները, երբ լքում էին գրաբարյան բարդությունները՝ գոհանալով աշխարհաբարյան պարզ ու ռամկական բառարանով, մինչդեռ գրաբարը ճոխ լեզու է, հոյակերտ բառերի ու դարձվածքների լեզու, որը ճոխ մտքի է պատշաճում, որովհետև հասարակ լեզվով անհնար է բարձր մտքեր հայտնել²: Նա հիացմունքով ու ոգևորությամբ է խոսում հայերենի բառերի մասին, որոնց հնչումն ավելին է ասում, քան բառի նշանակությունն է:

Ինչպէս հայտնի է, նոր բառերի ստեղծումն ու տարածումը հայերենում անվերջ ընթացք է: Յուրաքանչյուր գրող իր հետ բերում է նախկինում չարձանագրված նորանոր բառեր ու բառաձևեր, ինչպէս նաև իմաստափոխված բառեր, որոնք բնորոշում են ն' տվյալ գրողի, ն' տվյալ շրջանի հայերենի բառապաշարային առանձնահատկությունները: Ուստի բառային նորակազմությունների բացահայտումն ու քննությունը մշտապէս արդիական է հայերենագիտության համար:

Սույն հոդվածում անդրադարձել ենք Կ. Չարյանի «Օրերի պսակը» ժողովածուում տեղ գտած նորակազմություններին: Իհարկէ, չպետք է մոռանալ, որ քանի դեռ հրապարակի վրա չկան բոլոր գրողների ու բանաստեղծների բառարանները, հեղինակային նորաբանությունների

¹ Տ. Չրաքյան, Երկեր, Եր., 1981, էջ 314:

² Տե՛ս նույն տեղը, էջ 315:

ստույգ որոշման խնդիրը հղի է սխալներով ու թյուրիմացություններով, և դրանց հեղինակային պատկանելության մասին կարելի է խոսել միայն որոշակի վերապահումով: Այս առումով Կ. Զարյանի «Օրերի պսակը» ժողովածուից քաղված նորակազմությունների վերաբերյալ մեր մոտեցումը սահմանափակվում է հայերենի բացատրական բառարաններում ընդգրկված բառերի շրջանակով: Ուստի հեղինակային նորակազմություն ենք համարել բոլոր այն բառերը, որոնք չկան «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» (ՆՀԲ), Սո. Մալխասյանցի (ՀԲԲ), Էդ. Աղայանի (ԱՀԲԲ), Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարաններում (ԺՀԲԲ), Ռ. Սաքապետոյանի «Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարանում» (ԱԱՆԲ): Օգտվել ենք նաև ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի 2015 թ. հրատարակած «Նոր բառեր» գրքից³, որտեղ ներառված են գեղարվեստական գրականությունից հավաքված, բացատրական և նորաբանությունների բառարաններում չվկայված բազմաթիվ բառեր: Սակայն որքան էլ նոր բառարաններ և ուսումնասիրություններ ստեղծվեն, միննույն է, անհնար է սպասել հայերեն գրավոր մշակույթի անսահման բառազանձը, մանավանդ որ բազմաթիվ ստեղծագործություններ լեզվական, բառապաշարային պատշաճ քննության չեն արժանացել:

Կ. Զարյանը մեծ թվով բանաստեղծություններ է գրել, և, չնայած իր պոեզիայի ընդգրկումներին ու ծավալին, նա իր կյանքի ընթացքում հրատարակել է միայն «Օրերի պսակը» ժողովածուն, որը լույս է տեսել 1922 թ. Կոստանդնուպոլսում: Այն ամփոփում է այդ տարիներին երկիր ու ժողովուրդ կորցրած վտարանդի բանաստեղծի տառապանքներն իր կորսված պատմական հայրենիքի համար ու իր ժողովրդի ազգային մեծ ողբերգությունը, որ ներկա է գրքի գրեթե բոլոր էջերում: Այս ժողովածուում են ընդգրկված նաև հեղինակի սքանչելի «Ասացուածները» մեկը մյուսին լրացնող բանաստեղծությունների մի հրաշալի շարք:

Կոստան Զարյան բանաստեղծը տիրապետում է բառի կախարհանքին, բառին նոր գեղագիտություն է հաղորդում, կերտում բառեր անընդհատ պեղելով գեղեցիկի շերտերը, քանի որ ամեն բանաստեղծ, կախված խառնվածքից ու ասելիքի թարմությունից, ինչ-որ առումով նաև բառաստեղծ է, և յուրաքանչյուր ստեղծագործություն կայացած է, եթե ունի հուզական աշխարհի վրա երկարատև ներգործելու ուժ:

Միայն 25 տարեկանում բանաստեղծը ծանոթացավ հայերենի ողջ պերճանքին ու հմայքին, արևմտահայերենի ու արևելահայերենի ներքին, չգործարկված հնարավորություններին:

Կ. Զարյանի ստեղծած նորակազմություններն իրենց խորքում ամփոփում են հեղինակի զգացմունքի ու հաճախ միմյանց հակասող տպավորությունների ճշմարտությունը: Այս ամենի շնորհիվ է, որ

³ «Նոր բառեր», Ա, Բ պրակ, Եր., 2015, 2016:

ծնվում են բառեր, որոնք մինչ այդ չեն եղել, բայց իրավունք են ստանում լինելու, որովհետև ասում են ավելին, քան մի քանի բառեր կփորձեն ասել կողք կողքի:

Կ. Չարյանի բառային արվեստը լի է հաճախ հիացնող ու զարմացնող յուրօրինակ տարրերով: Հակադրությունները, որ շատ հաճախ դրսևորվում են նորաստեղծ բառի մեջ և առաջին հայացքից անսովոր են ու թվում են տարօրինակ, իրավունք են տալիս կոչելու Կ. Չարյանին անսպասելի բառի վարպետ, սակայն նա կարողանում է ճիշտ և ոչ ինքնանպատակ մատուցել այդ բառը, և այդտեղ է նրա մեծությունը: Նպաստելով խոսքի հուզարտահայտչական հնարավորությունների ընդլայնմանը՝ նորակազմ բառերը բանաստեղծին հնարավորություն են ընձեռում խուսափելու լեզվի մեջ անընդհատ շրջանառվող բառերի ու կապակցությունների հաճախակի գործածությունից: Նորակազմությունները խոսքը դարձնում են առավել կենդանի, հյութեղ ու պատկերավոր և համահունչ են բանաստեղծական բառապաշարին ու զարյանական խոսքին:

Սույն հոդվածի նյութը սերտորեն կապված է Կ. Չարյանի աշխարհայացքի, հատկապես նրա գեղագիտական ընկալումների հետ, քանի որ նոր բառը չի ստեղծվում բառարմատների ուղղակի կցումով. բառաստեղծումը ենթադրում է արվեստագետի հայացք, իմացականություն, վերլուծող ու համադրող միտք: Կ. Չարյանի համար բառերը գաղափարներ են, որոնք արտահայտելու համար, եթե լեզվի նշանները չեն բավարարում, ազատ բանաստեղծության վարպետը կերտում է նոր բառեր՝ թեկուզ երբեմն անտեսելով ակնհայտ խոսքային անհամաչափությունը, ինչպես նաև հին ու ոչ գործածական բառերին նոր իմաստներ հաղորդում՝ լեզվում գործածվող բառերի մեջ շեշտելով իր նկատածը, ինչպես՝ *այծտերեւ* բոյր⁴, *լեռնաշղթայ* բարձունքներ (200), *խնկարուրվառ* պատգամներ (125), մշտաճաճանչ *շողակաթ* (76), *սրնգախումբ* հովիվներ (19):

Ըստ մեր հաշվումների՝ Կ. Չարյանի «Օրերի պսակը» ժողովածուում տեղ են գտել երեք հարյուրից ավելի անհատական նորակազմություններ, որոնք արտացոլված չեն որևէ բառարանում: Դրանք դառնում են բառապաշարը բարձրաշունչ բառերով հարստացնելու հիմնական միջոց՝ երբեմն կանոնավոր, երբեմն խախտված չափերով, նույնիսկ բանաստեղծական արձակի հնարքներով շաղախված նրա բանաստեղծությունների հետաքրքիր պատկերային համակարգի ստեղծման համար՝ իր բանաստեղծական շքեղ ու ինքնատիպ մտածողությամբ հագեցած: Ինչպես դիպուկ բնորոշում է Ա. Ահարոնյանը. «Նա գրում է ավելի բնագրով, քան սովորած օրենքներով, երբ հրամայական պետք ունի իր ներքին, բուռն զգացողութունն ու մտածումը արտայայտելու: Նա շատ

⁴ Կ. Չարյան, Բառերի ոսկին: Բանաստեղծություններ, Եր., 2009, էջ 63 (այսուհետ մեջբերումները սույն հրատարակությունից՝ փակագծի մեջ):

չի վարանի բառերի ընտրութեան առջեւ եւ կասի իր խօսքը բրտօրէն կամ նորը կը կերտի, հոգ չէ, թէ նրա վրայ կոշտ կերպով աչքի զարնէն կռած ու կոփուած կէտերը եւ թարմ տաշուածքները: Նա ժամանակ չունի լեզուի նրբութիւնների վրայ յամենալու. երբ ինքն անգոր է, բնութիւնը կը խօսի իր փոխարէն վայրագօրէն հմայիչ, եւ միշտ լեզուական օրէնքները տրորում է ու անցնում, ինչպէս աշնան տերեւները խառնող կատաղի հողմ»⁵: Կ. Չարյանի ստեղծած բառերն ուղղակի նրա «ճարտարապետության» անկրկնելի տարրերն են. դրանցում, իրոք, բոլոր ժամանակաշրջանների «ճարտարապետության» ոճերը կարելի է գտնել: Օրինակ՝ նա ստեղծել է «**սքանչախանդ**» բառը, որ «սքանչելի» և «խանդոտ» բառերի իմաստների համադրումն է, սակայն այդ բառերը առանձին-առանձին կիրառելը իր նպատակին չէր ծառայի, ուստի հետդինակը հարկ է համարել սրանցից կազմված բարդություն ստեղծելը՝ զգացմունքների ու տրամադրությունների միաժամանակությունն արտահայտելու համար: Նման բարդություններով ողողված են Չարյանի բանաստեղծությունները: Այնտեղ կարելի է հանդիպել *եղեռնաշամբ, երազապար, զմրուխտալաց, զմրուխտակոյտ, փայլակնայոյս, կոհակածափ, նոխազաշունչ* և այլ բառերի, որոնք բոլորն էլ արտահայտում են տարբեր զգացողություններ՝ վերածելով բառը բոլորովին նոր պատկերի, անշարժությունը՝ շարժման, բառին գեղագիտական յուրօրինակ արժեք հաղորդում: Նորակազմ բառերի ստեղծման բառակազմական եղանակները նույնն են բառաբարդում և ածանցում՝ իրենց բազմազան արտահայտություններով: Նույնն են նաև գործառական ավելի մեծ հաճախականություն դրսևորող բառադրյալ բառերի տեսակները, որոնք են ածանցավոր բառերն ու հոդակապով բարդությունները:

Շեղինակի խոսքին առանձին երանգ են հաղորդում ինքնաբոլի կերպով կերտված այն նորակազմությունները, որոնք ստեղծված են այլ բարդությունների նմանությամբ, ունեն ոճական արժեք և նպաստում են խոսքի պատկերավորությանը: Այսպէս՝ *աստղ, արծաթ, արև, ոսկի* սկզբնաբառադրիչներով հանդիպող բարդությունների նմանությամբ Կ. Չարյանը կերտել է բազմաթիվ նոր բառեր՝ *աստեղաշէն (96), աստեղացան (98), արծաթագրահ (80), արծաթահամ (409), արծաթաշղարշ (67), արծաթասահ (123), արեւաքաղ (12), արեւաքանդ (16), արեւաթոր/արեւնաթոր (61), արեւայեղ(123), արեւնաքանդ (350), ոսկիաթոր (410), ոսկեարցունք (75), ոսկեերագ (83), ոսկեթառամ (80), ոսկեթափուն (47), ոսկեթիթեռ (374), ոսկեխանդ (51), ոսկեխաւար (93), ոսկեկայլակ (16), ոսկեմատն (377), ոսկետաւիղ (424), ոսկիաձայն (427)* և այլն:

Կ. Չարյանն իր բանաստեղծություններում օգտվել է և՛ արևելահայերենին, և՛ արևմտահայերենին բնորոշ բառապաշարից: Երբեմն արտասանության երկվությունը Կ. Չարյանին թելադրել է նաև գրության

⁵ «Շայրենիք», Բոստոն, 1930, հ. 9, էջ 61:

երկվություն, ինչպես՝ *կանանչաթուր/կանաչաթուր* (117): Նա գործածել է նորակազմ բառերի հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակները, որոնցից առաջինը բնորոշ է արևելահայերենին, երկրորդը՝ արևմտահայերենին, ինչպես՝ *անդունդաշէջ-անդնդաստուեր, հուրհուրան-հրանիզակ, հրաթրթիռ-հուրակարկաչ, սուգերգում-սգաստուեր, պղնձաներկ-պղինձէ* և այլն: Այս ձևերը ստեղծում են խոսքի բազմազանություն, սակայն երբեմն հեղինակը դիմել է հնչյունափոխական գուգաձևությունների՝ ավելի շատ ելնելով տաղաչափական պարտադրանքից՝ հանգերի քանակի համաչափությունն ապահովելու նպատակով: Տաղաչափական նպատակներին է ծառայում նաև նույնատիպ նորակազմ բարդության հոդակապով կամ անհոդակապ կիրառությունը, ինչպես՝ *ոսկեաբանտ, ոսկեաքանդ-ոսկեքանդ, ոսկեզեռ, ոսկեկայլակ*:

Ըստ բարդությունների խոսքիմասային արտահայտության՝ նորակազմ բարդ բառերի կառուցվածքային կաղապարներում գործող ընդհանուր օրինաչափությունն այն է, որ առաջին հերթին ակտիվություն է դրսևորում գոյականը: Բաղադրյալ բառերի մեծ մասը կազմված է կենսունակ բառակազմական կաղապարներով, որոնցում, ինչպես նշվեց, հաճախված են հոդակապով բարդությունները:

ա) **Գոյական+գոյական**՝ *անդնդածով* (434), *անդնդապար* (54), *բիրեղաթթագ* (15), *դժոխածով* (24), *թախծասարինգ* (424), *թիթեռաբոց* (59), *լուսանուազ* (49), *խորհրդավառ* (366), *հրաշուրթ* (35), *լուսաանդունդ* (368), *լուսատափ* (17), *լուսնաերես* (54), *ծաղկաթիթեռ* (52), *ծաղկահուր* (59), *կսկծացավ* (28), *հովուափող* (122), *ձայնախաղ* (100), *ձինատեսիլ* (122), *ճաճանչափունջ* (17), *մահազանգ* (111), *մրճագարկ* (124), *յակընթաթեղ* (61), *ոսկիածով* (403), *պղնձաթոյր* (75), *սալորագոյն* (81), *սուտակաշար* (75), *վարդասարին* (122), *վարդասարդ* (93), *փետրաշրշուն* (57), *փողաձայն* (125), *օձապսակ* (18):

բ) **Ածական+գոյական**՝ *բազմաերանգ* (47), *բազմաթիթեռ* (57), *բազմաբոց* (73), *բիրախորհուրդ* (82), *բոնկահեր* (447), *դողդողալար* (15), *զգայաշունչ* (67), *լիամագիլ* (76), *խօլաերագ* (105), *խօլափայլակ* (14), *կիսաձուկ* (34), *հեզակայլակ* (90), *հրաշապարտէզ* (94), *հրկիզաբոց* (28), *հրկիզաշունչ* (49), *մեծակրակ* (97), *մեղմարեւ* (95), *մեղմազանգ* (15), *մեղմականթեղ* (86), *մեղմակրակ* (409), *մեղմաճաճանչ* (94), *մեղմաշրջան* (121), *մենաժամ* (12), *մենակրակ* (22), *ներքնակրակ* (78), *ներքնահուր* (22), *նորահրապոյր* (123), *նրբասարսուռ* (70), *ջերմադող* (109), *սարսափավանկ* (111), *սոսկադող* (22), *սոսկանուազ* (14), *տխրախօսք* (440), *տխրաշար* (51):

գ) **Թվական+ գոյական**՝ *հազարկանթեղ* (17), *հազարքնար* (98):

դ) **Գոյական+ածական**՝ *աղաւնապերճ* (42), *աշխարհավառ* (125), *երկնավառ* (78), *լուսահնչուն* (351), *լուսնահիր* (65), *ծաղկափակ* (24), *հողմադեղեւ* (64), *մեղեղնագեղ* (41), *տաւղահարուն* (64):

ե) **Ածական+ածական**՝ *զեղազուարթ* (78), *ճանրախաւար* (416), *հե-*

զասահուն (416), հեզասմոյն (86), յեղազեղուն (122), ներքնախորը (34), շողշողաշէն (408):

զ) **Գոյական+բայ**՝ աղամանդաքանդ (40), ալիքաբեր (125), ամարասուն (113), այսակիր (444), անուրջաթիռ (42), արինակաթ (50), արփիաթոր (17), արփիածին (120), արփիամեռ (66), արփիավառ (366), բողբոջազարդ (124), բոյրաթոր (59), բոյրասփիւռ (41), բոցաբոլոր (93), բոցափափաք (14), գարնանազարդ (444), գարնանաշարժ (122), գուշակաբեր (75), դաշնայորդ (17), դողակաթ (94), եղենածածկ (350), երազազարդ (114), երազաթիռ (65), զմրուխտաշէն (425), զովահար (377), թիթեռաթիռ (10), լուսաքանդ (347), լուսնաքաղ (76), խարշափաշող (114), խորհրդաբեր (46), ծաղկաերեր (121), ծաղկեզարդ (354), ծիծաղավառ (123), ծովաբոլոր (49), կախարդաբեր (123), կարկաչավազ (62), կոհակամեռ (64), կրակնաթափ (120), կրակնածին (117), հիավառ (11), հողմնատատան (366), հովահալած (73), հրդեհայորդ (124), ձայնաթափ (64), ձիահեծ (437), ճաճանչաբեր (367), ճառագայթաթոր (39), ճառագայթավառ (56), ճրագնատար (437), մեղեղնածոր (94), մետաքսածալ (113), մոզասփիւռ (94), մոզավառ (14), յակնթաթոր (400), յուսապատառ (11), նռենաշող (62), սադրանքածին (73), սատափազարդ (403), սատափաշէն (21), սատափնակաթ (16), սարսափալաց (36), սարսռադող (59), սարսռատող (103), սգածին (70), սիրադեղեղ (50), սիրաթաւալ (110), սիրացան (75), սրտատուայտ (23), սուտակացան (445), տենդացնոր (19), տոնազարդ (392), տոնավառ (52), փիլոնակիր (430):

է) **Ածական+բայ**՝ անհունածին (72), անհունաշէջ (93), անհունաշող (60), դեղեւաթիռ (58), խորահեղ (50), խօյապտոյտ (114), խորապեղեղ (438), խորատանջ (87), հիավառ (352), հինակատոյց (425), հոյաքանդ (80), մեղմադող (375), մեղմաճեմ (420), մեղմատատան (126), մեղմատրտունջ (118), մեծափարփառ (124), ջերմադող (110), սաղապաճեմ (412), սուկատատան (14), սրսփադող (346), տիրագուշակ (14), տրտմալաց (96):

ը) **Թվական+բայ**՝ միաշարժ (23):

թ) **Թվական + գոյական**՝ եօթնակոյ (377), եօթնասուտակ (13):

ժ) **Բայարմատ+բայարմատ**՝ լալաթրթիռ (430):

ժա) **Մակբայ+ գոյական**՝ հեռալալին (125), հեռանուագ (95):

ժբ) **Մակբայ+բայ**՝ մշտադող (70), մշտաերեր (410), մշտաճաճանջ (76), հեռականչել (353):

ժգ) **Մակբայ+ ածական**՝ մշտահիր (109), հեռագայուն (84):

ժդ) **Դերանուն+բայ**-համայնատրոփ (110):

Ինչպէս նշվեց, Կ. Չարյանի նորակազմություններում գործածության որոշ հաճախականությամբ առանձնանում են նաև անհոդակապ բարդությունները, ինչպէս՝ այծտերեւ (63), բադհաւաքում (352), թաւշերեզ (81), թէլվարդ (57), ծնծղազարկ (438), կայլակնօրոր (15), հազարզմրուխտ (81), հազարթոշուն (88), եօթնակոյ (377), սրտվար (439), փողփողենէջ (41):

Բառաբարդման մեկ այլ խումբ են կազմում կրկնավորները, որոնք գալիս են շատ հին ժամանակներից. «Այն առավել չափով գործուն է ժողովրդական խոսակցական լեզվում և, մասնավորապես, բարբառներում: Այդ եղանակով ամեն օր ու ամեն ժամ մարդ ուզածի չափ կարող է կազմել նորանոր բառաձևեր, որոնք հաջող ու տեղին լինելու դեպքում կմտնեն շրջանառության մեջ կամ հակառակը, մեկ անգամ գործածվելով, այդպես էլ կմոռացվեն՝ առանց արժանանալու քաղաքացիական իրավունքի»⁶: Բարդության այս տեսակի գործածությամբ, որ առավելապես հատուկ է խոսակցական լեզվին, հեղինակն արտահայտում է հատկանիշի կամ որևէ գործողության սաստկություն, երբեմն՝ ամբողջականություն: Կրկնավոր կազմությունները հիմնականում մակբայներ են, քանի որ, ինչպես նշում է Լ. Հովսեփյանը, կրկնությունը անվանական խոսքի մասերից մակբայների կազմության հիմնական եղանակն է եղել հայերենի զարգացման բոլոր փուլերում⁷: Կրկնավոր նորակազմություններ են Կ. Չարյանի «Օրերի պսակը» ժողովածուում հետևյալները՝ *բալան-բալան (105), բուռ-բուռ (120), ծալք-ծալք (120), դլին-դլին (124), դողդող (24), դուլդուլ (102), զանգ-զանգ (434), զարդի-զարդել (80), թաքնաթաքուր (15), ծալք-ծալք (446), ծովծվան (97), կայլակ-կայլակ (115), հոյլ-հոյլ (30), հեւ-հեւ (122), ճիթ-ճիթ (437), մենիկ-մենիկ (16), շիթ-շիթ (122), սողսող (59), սուրասուր (397), տաշտ-տաշտ (20), փետուր-փետուր (90), փողփող (24), քաշքաշ (22)*:

Ածանցման հիմնակաղապարն իրենից ներկայացնում է մեկ հիմնական և մեկ երկրորդական ձևային՝ ածանցի բաղադրություն, իսկ ըստ հիմնական ձևային նկատմամբ ածանցի գրաված դիրքի՝ դրանք բաժանվում են նախաածանցավոր և վերջածանցավոր կաղապարների, որոնցից վերջինները մշտապես գերակշռում են: Ածանցավոր բառերի սերող հիմքերը կարող են լինել ոչ միայն պարզ, այլև բաղադրյալ կազմություններ, ըստ որի էլ առաջանում են նախածանցների և վերջածանցների, ինչպես նաև տարբեր ձևավորում ունեցող հիմքերի ու ածանցների զուգորդություններ: Մենք ածանցմամբ ստեղծված նորակազմ բառերը առանձնացրել ենք՝ ա) ըստ հիմնական ձևային նկատմամբ ածանցի գրաված դիրքի՝ նախածանցավոր և վերջածանցավոր կաղապարներ, բ) ըստ սերող հիմքի կազմության, գ) ըստ ածանցների նորակազմ բառեր կերտելու ակտիվության: Նախածանցավոր կաղապարներից Կ. Չարյանի ժողովածուում առավել հաճախական են պարզ հիմքով մասնակաղապարները, ընդ որում՝ նախածանցներից հաճախադեպ է **ան-** նախածանցը՝ *անդազադ (30), անճաճանչ (42), անվկայ (422), անփեթակ (99)*: Մեկ նորակազմ բառ կա **անդր-** նախածանցով՝ *անդրամահ (422)*, մեկ բառ՝ **վեր-** նախածանցով՝ *վերկոչել (414)*:

⁶ Ա. Պապոյան, Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, Եր., 1970, էջ 31:

⁷ Տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը, Եր., 2016, էջ 37:

Բաղադրյալ հիմքով նորակազմ կաղապարը ներկայացնում է նախածանց+վերջածանցավոր բառ՝ *անհեծկլտանք* (87), *արտացոլուն* (61), *զերազգայուն* (291):

Մերող հիմք + վերջածանց կաղապարով նորակազմություններն ավելի հաճախադեպ են, որն անշուշտ բխում է հայերենի բառակերտման առանձնահատկություններից, որտեղ վերջածանցումն ավելի կենսունակ է: Կ. Ջարյանի բառապաշարում զգալիորեն արդյունավետ են արմատ+վերջածանց, արմատ+վերջածանցավոր բառ մասնակաղապարները՝ հետևյալ վերջածանցներով՝ -զին՝ *կողկողագին* (39), -ան՝ *բոյրածորան* (66), *ծլան* (447), *ծովծվան* (114), *հուրհուրան* (375), -իկ՝ *հարամիկ* (429), *մարմինիկ* (24), -ական՝ *պոմպեական* (92), -արան՝ *հրարան* (119), անք՝ *հնայք-տենչանք* (73), -եալ՝ *բանդագուշեալ* (109), -եայ՝ *վանեայ* (43), -է՝ *բիրեէ* (15), -իւն՝ *խողորտիւն* (107), -կուն՝ *ցայտկուն* (57), -ող՝ *ծփող* (357), -ստան՝ *ծաղկեստան* (410), -ում՝ *թիթեռում* (79), *ջութակում* (79), *սազերգում* (106), *սուզերգում* (28), -ուն՝ *լպրտուն* (70), *խրպուն* (106), *ծաղկածլուն* (94), *կռուն* (102), *սլսլուն* (14), *սովածփուն* (123), *տարփուն* (109), *տաւղուն* (17), -օրէն՝ *արընզօրէն* (94), *վառօրէն* (11):

Բանաստեղծը հետաքրքիր, գեղեցիկ նորակազմություններ է ստեղծել նաև բայական ածանցներով. բայերի կերտումը այլ խոսքի մասերից տեղի է ունենում պարզապես բայական վերջավորության կցումով կամ -անալ բաղադրյալ բայակերտ ածանցով⁸՝ *դյութանալ* (25), *երածշտանալ* (21), *զարդիզարդել* (80), *թմրկել* (65), *ժապավինանալ* (30), *կանթեղանալ* (3), *կտուցել* (446), *հեւանալ* (96), *հրդեհանալ* (35), *հեռականչել* (19), *ճոնթել* (107), *ջութականալ* (13), *սալսրսել* (30), *սաւանանալ* (24), *սողկրտալ* (429), *սուտականալ* (72), *քաղահանել* (361), *քերքերել* (381):

Այսպիսով, հեղինակային նորակազմությունները զարյանական խոսքը ոճավորող կարևորագույն միջոցներ են, որոնք նպաստում են դրա սեղմությանը, բազմազանությանը, ինքնատիպությանն ու թարմությանը, բանաստեղծական խոսքի հանգավորմանն ու բարեհնչությանը: Ինչպես բնորոշում է Ե. Տեր-Խաչատրյանը, «Կ. Ջարյանի պոեզիան իր հարստությամբ, իր բովանդակությամբ ու խորքով մաքրում է մեր նորագույն պոեզիայի պատկերը արհեստական ոգեշնչվածությունից, ուշացած ռոմանտիզմից, կեղծ ազգայինից, երգային սենտիմենտալիզմից, սովետահայ պոեզիային բնորոշ նորդասականային գրքայնությունից և պոեզիայի դիմապատկերը խաթարող ու աղարտող այլ գծերից ու տարրերից»⁹:

Բանալի բառեր – *աշխարհըմբռնում, ածանց, իմաստային, կաղապար, լեզվական կառուցվածք, ածանցում, բառապաշար, գրական լեզու, տաղաչափական*

⁸ Տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 300:

⁹ Ե. Տեր-Խաչատրյան, Կ. Ջարյան, «Բառերի ոսկին» գրքի վերջաբան, Եր., 2009, էջ 667:

СУСАННА ГРИГОРЯН – Неологизмы в сборнике Костана Зарьяна «Венец дней». – Лексика поэзии К. Зарьяна богата и разнообразна. Писатель широко и мастерски пользовался словарными запасами родного языка и его словообразовательными возможностями. В сборнике стихотворений К. Зарьяна «Венец дней» насчитывается свыше трёхсот неологизмов, не зафиксированных ни в одном из словарей. Они, как правило, придают авторскому слову дополнительные оттенки значения, а поэтической речи стилистическую гибкость и образную выразительность. Поэт создавал неологизмы самыми разными способами. Обращают на себя внимание, в частности, немногочисленные префиксально-суффиксальные новообразования – они благозвучны и, при всей своей новизне, соответствуют законам и словообразовательным традициям армянского языка.

Ключевые слова: миропонимание, суффикс, модель, языковая структура, деривация, лексика, литературный язык, метрика

SUSANNA GRIGORYAN – Neologisms in Kostan Zaryan’s Collection of Works – “The Crown of the Days”. – The vocabulary of Kostan Zaryan’s poems is rich and multiform. The poet has made use of the whole rich lexical material of our language masterly and in case of need, he also used the word-building possibilities of the Armenian language, creating new words and expressions and in this way enriching not only the language of his own works but also the boundaries of the literary language.

More than 300 author neologisms are included in Kostan Zaryan’s collection of works- “The Crown of the Days” which are not reflected in any of the dictionaries of neologisms of the Armenian language. Those poetically formed neologisms which are created according to the principle of the complex of ready-made patterns give additional shades of meaning to the speech of the author, have stylistic value and contribute to the greater expressiveness of speech. The compound words created by Kostan Zaryan are made by means of quite different words. The prefixal-suffixal (derivational) neologisms, which are mainly melodious and are formed according to the rules and regulations of word-formation tradition, are not numerous in Kostan Zaryan’s poems.

Key words: world perception, affix, semantic, pattern, linguistic structure, affixation, vocabulary, literary language, prosodic